ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Աթոյան փողոցի հ.80 շենքի հ.13՝ 81.07քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10.07.2015թ. հ.10072015-01-0147 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մելիք Ժորայի Հովհաննիսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Աթոյան փողոցի հ.80 շենքի հ.13՝ 81.07քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մելիք Ժորայի Հովհաննիսյանին:

Աթոյան փողոցի հ.80 շենքի հ.13՝ 81.07քմ ընդհանուր մակերեսով բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10.07.2015թ. հ.10072015-01-0147 վկայականի՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից 06.11.2015թ. տրված հ.24/1-8/Հ-389 տեղեկանքի՝ Մելիք Ժորայի Հովհաննիսյանը 1976 թվականից սկսած իր ընտանիքի հինգ անձով մշտապես բնակվում է վերը նշված հասցեում, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չի ունեցել սեփականաշնորհել բնակարանը:

Մելիք Ժորայի Հովհաննիսյանը մշտապես բնակվելով Աթոյան փողոցի հ.80 շենքի հ.13 բնակարանում կատարել է պարտադիր նորմերի /աղբահանության, էլեկտրաէներգիայի, հեռախոսի սպասարկման/ գծով վճարումներ:

Ընտանքի անդամները տվել են իրենց համաձայնությունը Աթոյան փողոցի հ.80 շենքի հ.13 հասցեում գտնվող բնակարանը Մելիք Ժորայի Հովհաննիսյանի անվամբ սեփականաշնորհելու համար:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման ղեկավարի 03.11.2015թ. հ.ԼԱ-2/7385 գրության՝ Մելիք Ժորայի Հովհաննիսյանի /ծնվ. 06.08.1976թ./ անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարվա ընթացքում որևէ անշարժ գույքի օտարում, կամ ձեռք բերում չի գրանցվել:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ